սաք մատուռ մի սքանչելի. եւ դռան վերեւն զՊետրոս եւ զՊօղոս կոփած, զի զմիմիանս համբուրէին: Եւ ասին թէ այս այն է զի յորժամ տանէին զՊօղոս գլխատել, հանդիպեցաւ Պետրոսի. եւ տեսեալ զմիմիանս՝ լացին բազում ժամս եւ գրկախառն ողջունիւ համբուրեալ զմիմիանս՝ հրաժարեցան. զոր այժմ այն տեղն եկեղեցի է: Եւ ինչ սրբոյ անուն եկեղեցի լինի, զայնոր ամէն տնօրինականքն կու հանեն, զի ախմարքն իմանան զէութիւն բանին. զի որչափ որ աճամի մարդ լինի եւ գիր չի գիտնայ, կու գիտենայ: Եւ մտեալ ի սուրբն Պօղոս. եւ էր հին՝ դեռ Կոստանդիանոսէ մնացեալ. եւ ասին թէ երբ զսուրբ Պետրոս կատարեն՝ զայն պիտի սկսնուն նորոգել: Եւ մերձ դրսի դռանն էր խորան սրբոյն Դիոնէսիոսի. անդ երկրպագեցաք. եւ միւս դիհն էր խորան. եւ գրած էր թէ աստ է մարմին Ոստիանէ կուսի: Եւ մեծ հրաշք եղեւ ի գլխատումն Դիոնէսիոսի. զի յորժամ հատին զգլուխն՝ նա էառ ի ձեռս ժամ մի շրջէր շուրջանակի եւ ապա եդ զգլուխն եւ հանդեաւ: Եւ կայր մէջ եկեղեցոյն զմպէթ մի դեղեցկաշէն ի վերայ աղնիւ մէրմէռէ սեանց. եւ մէջն մարմին սուրբ առաքելոյն Պօղոսի, ազգի ազգի մեծարանօք եւ արծաթի կանթեղօք, որ տեսողքն պչուցեալ հային. եւ ի շաֆաֆէն աչվին խամաչմիչ կու լինի: Անդ անկեալ ի վերայ երեսաց երկրպագեցաք, մեղաց

6 վէրեւն: — 12 յայժմ: